ՀՌԻՓՍԻՄԵ ԶԱՔԱՐՅԱՆ
ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոն
zaqaryan hripsime@mail.ru

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ «ԵՍ»-ԻՆ ԲՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. հեղինակային «ես», դերանուն, բանաստեղծական սուբյեկտ, արտասանական երանգավորում, լիրիկական «ես», պոեզիա, բանաստեղծություն, Հենրիկ Էդոյան:

Ключевые слова и выражения: авторское «Я», местоимение, поэтический субъект, артикуляционная нюансировка, лирическое «Я», поэзия, стихотворение, Генрих Эдоян.

Key words and expressions: authorial “I”, pronoun, poetic subject, intonation, lyric “I”, poetry, poem, Henrik Edoyan.

Հենրիկ Էդոյանը պատկանում է պատմություն ունեցող բանաստեղծների թվին, որոնց «պոեզիան ձևավորման շրջան չի ապրել: Սկսած «Անդրադարձումներից» (1977) (և դրան նախորդող շրջանում)՝ Էդոյանի պոեզիայի նախահիմքերն ամբողջական են»[1]: Հ. Էդոյանի ստեղծագործություններում առկա դերանվանական ձևերով արտահայտված հեղինակային «ես»-ի ուսումնասիրությունը կարող է պատկերացում տալ պոետի բարձրագույն հայացքների մասին և բացահայտել նրա բանաստեղծական աշխարհի անտրոպոսոֆիական օրենքները: Խոսել Հ. Էդոյանի քնարական հերոսի մասին դժվար է, քանի որ, մեր կարծիքով, Հ. Էդոյանը Նարեկացուց հետո, կարելի է ասել, առաջին, հնարավոր է նաև միակ հայ խոշորագույն բանաստեղծն է, ում «քնարական հերոսը դեռեւս անձնաւորութիւն չէ, այլ ընդհանրացուած անհատ, հաւաքական կերպար, վերացարկուած մարդկային էութիւն»[2]: Լիրիկական հերոսի[3], լիրիկական «ես»-ի, լիրիկական սուբյեկտի և հեղինակային

---

[1] **Աբրահամյան Ս.,** Հենրիկ Էդոյան, Խոսքն իմ հենարանն է և «Այդ անշարժ վայրկյանն եմ ես»//Գրականագիտական հանդես ԺԷ, Եր., «Արմավ» հրատ., 2017թ. էջ 147:

[2] **Ղազինեան Ա.**, Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Բեյրութ, «Անթալիաս» հրատ., 1995, էջ 133:

[3] Տե՛ս **Гинзбург Л. Я**. О лирике, Л., изд. «Советский писатель», 1974, с. 155-167.

գիտակցությունը բնութագրող այլ տերմինների փոխարեն մենք հոդվածում նկատի կունենանք հեղինակային «ես»-ը՝[4] գործածված որպես դերանուն:

Բանաստեղծի ստեղծագործական աշխարհ ներթափանցելու, «լեզվի գեղարվեստական պատկերը»[5] և պոետական միտքը ընկալելու համար անհրաժեշտ է հասկանալ նրա ներքին խոսքը, քանի որ «նրա ներքին կյանքը գտնվում է այն կողմում, ներսի փակ աշխարհում»[6]: Սակայն որքան կարևոր է հասկանալ ներքին խոսքը, նույնքան կարևոր է ընկալել լուռ խոսքը, իսկ Հ. Էդոյանի պոեզիան հարուստ է ընկալելի լռությամբ: Այս պարագայում նման լուռ բառ կարելի է դիտարկել «մենք» դերանունը՝ գործածված «Հիշողություն» բանաստեղծությունում.

Նստած ենք:
Խմում ենք:
Լուռ ենք:
Ծխում ենք:
Գիտենք՝ ինչ-որ տեղ
ինչ-որ բան կա գրված:
Լուռ ենք, խմում ենք
սեղանի աղքատությունը
և այն ինչ-որ բանը
ինչ-որ տեղ գրված:
(«Հիշողություն»[7])

Վերոբերյալ բանաստեղծությունում լիրիկական «ես», բանաստեղծություն, ընթերցող եռամիասնության մեջ լիրիկական «ես»-ը միջանկյալ դեր է զբաղեցնում. առաջին պլանում ոչ թե լիրիկական «ես»-ն է, այլ՝ իրադարձություն, իրավիճակ կամ շարժառիթ:

Հ. Էդոյանի համար բանաստեղծն այն մարդն է, ով արմատավորված չէ առարկայական աշխարհում. նա միշտ իր հարակից բարձունքում է: Բանաստեղծական աստվածապարգևության գիտակցումը և բացարձակի հետ ամբողջանալու միտումը անխուսափելիորեն հանգեցնում են

[4] Տե՛ս Теория литературы: Учебное пособие для студентов филологических факультетов высших учебных заведений: В 2 т. /Под. ред. Н. Д. Тамарченко.-Т. 1: Н. Д. Тамарченко, В. И. Тюпа, С. Н. Бройтман. Теория художественного дискурса. Теоретическая поэтика, М., изд. «ACADEMA», 2004, с. 333-347.

[5] **Бахтин М. М.** Вопросы литературы и эстетики. М., изд. «Художественная литература», 1975, с. 177.

[6] **Էդոյան Հ.,** Շարժում դեպի հավասարակշռություն, Եր., «Ս. Խաչենց» հրատ., 2009, էջ 365:

[7] **Էդոյան Հ.,** Ընտրանի, Եր., «Հայագիտակ», հրատ., 2016, էջ 11:

բանաստեղծի և աշխարհի միջև կոնֆլիկտի ծագմանը: Այդ իսկ պատճառով բանաստեղծը պոեզիա է մուտք գործում բարձրաձայն ասված «ես»-ով.

Ես չկատարեցի՝ ինչ որ գրված էր:
Ես անցա ինչպես առավոտն է անցնում,
քսվելով շենքերին:
Ես պարտություններիս բաժակը դատարկեցի
իմ հույսերի վրա:
Ես ձեռք տվեցի իմ անցնող օրերին
և ոչինչը տեսա:

(«Ես չկատարեցի՝ ինչ որ գրված էր»[8])

Բանաստեղծության սյուժեն կարելի է բնութագրել հետևյալ կեպ՝ հեղինակային «ես»-ի անկշիռ դատարկություն, որի դեպքում «ես»-ը, մեկուսանալով աշխարհիկ կյանքի անկատարությունից, դառնում է Աստծո ձայնի՝ պոեզիայի տարերքի և ոգեշնչման կրողը: Կոնֆլիկտն ինքնին հարաբերակցվում է նրանով, որ բանաստեղծական «ես»-ը, չկատարելով այն, «ինչ որ գրված էր», բախվում է «ոչնչին»:

Հ. Էդոյանն ինքը երբեք իրեն չի հարաբերում «խառնիճաղանջ ամբոխի»[9] հետ, այլ հակառակը՝ հակադրվում է նրան, որովհետև.

Որպեսզի կարոտը խեղդեն-
արվեստից երես թեքեցին:
Որպեսզի ազատվեն մտքերից-
մտքերի խաբկանքին տրվեցին:
Որպեսզի մոտենան Կոսմոսին
Քաոսը նախընտրեցին:
Որպեսզի ապրեն-
գերադասեցին մեռած ձևանալ:

(«Որպեսզի կարոտը խեղդեն»[10])

«Արտաքին աշխարհի անկանոն վիճակը խաթարում է «ես»-ի ներհայեցողության բնականոն ընթացքը՝ աշխարհի հանդեպ մարդու վերաբերմունքը պայմանավորելով այդ խաթարման բնույթի ու աստիճանի հետ: Ինչքան խորն է այդ աստիճանը, այնքան ընդգծված է աշխարհի նկատմամբ մարդու թշնամանքը: Ինչքան խորանում է «ես»-ի ինքնագիտակցումը, այնքան մեծանում է այն կորցնելու վտանգը, ինչի մեջ

[8] Նույն տեղում, էջ 14:
[9] Տե՛ս **Գրիգոր Նարեկացի**, Մատյան ողբերգության: Տաղեր, Եր., «Զանգակ» հրատ. 2013, էջ 430:
[10] **Էդոյան Հ.,** Ընտրանի, Եր., «Հայագիտակ», հրատ., 2016, էջ 719:

իր ընդգծված դերակատարությունն է ունենում արտաքին աշխարհը, որի ամենակատարյալ հեռանկարն անգամ չի կարող համարժեք լինել «ես»-ի բացակայության համակերպմանը»[11]: Մեկուսանալով և վեր բարձրանալով իրեղեն աշխարհից՝ բանաստեղծը մոտենում է բարձրագույն գոյությանը, ամփոփվում իր ներաշխարհում և, ձերբազատվելով արտաքին ազդեցություններից ու կախվածությունից, ձեռք բերում տիեզերական ճշմարտությունները հասկանալու մենաշնորհը: Այնուամենայնիվ, արտաքին աշխարհից վեր բարձրանալը դեռևս բավարար չէ բանաստեղծին՝ իր ներաշխարհում ամփոփվելու համար: Նա նաև պետք է վեր բարձրանա ինքն իրենից, ապաանձնավորվի և իր գոյաբանական «ես»-ը փոխարինի անմահ «ես»-ով: Այս տեսանկյունից բանաստեղծը ոչ թե ուղղակի ապրում է հասարակության մեջ, այլ առաքելություն է կատարում: Նա «....խուսափում է ժամանակից՝ անցնելով ժամանակի մի այլ ձևի մեջ, որի չափումները տարբերվում են մեր ժամանակի չափումներից»[12]: Նա վերանձնային հեռատեսությամբ տեսնում է այս ամենը և փորձում իրեն ազատել պարտադրված կենսաձևից: Պարզ իրականությունից օտարումը անխուսափելիորեն վերաճում է ինքնօտարման: Իր ներաշխարհում ամփոփված հավերժական «ես»-ի փնտրտուքներում բանաստեղծն իրեն ավելի ու ավելի օտար է թվում, և տեղի է ունենում կոնֆլիկտ, որը մետաբանաստեղծական մակարդակով կապված է հոգու և նյութի, կենցաղի և գոյության կոնֆլիկտի հետ: Էդոյանական մտքի ինքնապարփակ թաքնախորհրդությունը, շղարշավորվածությունը ոչ այլ ինչ են, քան մարդկային բնության բացահայտման պայքար, հայացք՝ ուղղված մարդկային համապարփակ էության խորքը, որը տիեզերական քաոսում մաքրազտված ներդաշնակություն է որոնում:

Էդոյանի քնարական գիտակցությունը գրեթե միշտ գտնվում է երկվության մեջ: Նրա քնարերգության մեջ առկա են բազմաձայնություն, տրամախոսություն՝ որպես որոշակի անցուղի, որն անցնելուն զուգընթաց սուբյեկտիվ «ես»-ը անէացնում է ինքնագոյությունը՝ իր վրա վերցնելով այլ՝ վերանձնային գիտակցության ողջ ամբողջականությունը՝ մակրոտիեզերքից թափանցելով միկրոտիեզերքի անվերջություն: Գիտակցության կենսական, սուբյեկտիվ և մետաֆիզիկական տիպերը պոետի քնարերգական կառուցվածքում փոխգործակցում են երկխոսության իրավունքով: Այս

[11] **Մուսայելյան Հ.**, Պոեզիայի ներքին տարածությունը, Եր., «Դիզակ պլյուս» հրատ., 2010, էջ 227:

[12] **Էդոյան Հ.**, Շարժում դեպի հավասարակշռություն, Եր., «Ս. Խաչենց» հրատ., 2009, էջ 272:

հարթության վրա Էդոյանը բարձրանում է բոլորովին այլ մակարդակ. նրա երկխոսությունը անձի երկրային երկբնույթ ֆենոմենն է: Ըստ Հ. Էդոյանի՝ երկխոսությունը երկրայինի՝ անբավարար գիտակցության և բարձրագույն մետագիտակցության միջև անվերջանալի է: Այն վերադառնում է դեպի համընդհամուր գիտակցություն՝ գոյության եզրագծից այն կողմ, ուր տեսիլքներն ու պատրանքները տարրալուծվում են, սակայն գոյության մեջ հնազանդորեն կրում է մետագիտակցության ամբողջ բեռը. այն գերգիտակցության մեջ անհատական գիտակցության ազատագրումն է, որը տանում է դեպի բարձրագույնը, դեպի բացարձակը, դեպի գոյության հավիտենականությունը: «Բանաստեղծությունը հեղինակի ապրումի, մտորումի դրսևորումն է. գրեթե մշտապես այն մենախոսական զրույց է բացակա ինչ-որ մեկի հետ, որ բանաստեղծի համար ներկայություն է, ու նրան է բացում իր սիրտը»[13]:

Ինչպես նշվեց, Հ. Էդոյան բանաստեղծին բնորոշ են մենախոսությունն ու երկխոսությունը: Նա երկխոսության մեջ է մտնում ընթերցողի հետ.

Ապրում եմ, ինչպես ջրերն են ապրում
ավազների մեջ, կղզիների շուրջ, քարերի խորքում
կամ ինչպես մի ծառ,
որ ոչինչ չունի իրենից բացի...
(«Խոստովանություն»[14])

Հ. Էդոյանը ընթերցողին է ներկայանում յուրօրինակ խոսքային ձևով, որը նույնացվում է բանաստեղծական «ես»-ի պատկերի հետ և լրացնում հեղինակի կերպարը իր ներքին ապրումներով, զգացողություններով, մտքերով: Հատկանշական է, որ «ես»-ը՝ գործածված որպես դերանուն, մշտապես ներկա է Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհում, որը երբեմն բացահայտվում է երկխոսության և հակադրության մեջ.

...Ես հեռանում եմ, որպեսզի մոտենամ,
մեռնում եմ, որպեսզի ապրեմ,
իջնում եմ, որպեսզի ելնեմ,
մտնում եմ ժամանակի տարածության մեջ,
որպեսզի խուսափեմ շարժումների ցավից...

---

[13] **Գաբրիելյան Վ.**, Ի՞նչ է բանաստեղծությունը (Մտորումներ չափանիշների մասին)//«Գրական թերթ», 2014, թիվ 35 (3224), էջ 6-7:

[14] **Էդոյան Հ.**, Բանաստեղծություններ, Հատոր առաջին, Եր., «Վան արյան» հրատ., 2010, էջ 78:

(«Խոստովանություն»[15])

Շատ հաճախ հեղինակային «ես»-ը, որը թաքնված է տեքստում, երևակվում է բայական ձևերի միջոցով: Հաճախ երկխոսությունը միտումնավոր ուղղված է ոչ թե կոնկրետ սուբյեկտի, այլ հենց իրեն՝ հեղինակին.

Դու ոչ անցորդ ես և ոչ ճանապարհորդ,
դու ոչ գալիս ես գիշերվա եզերքից,
ոչ գնում դեպի այնտեղ,
դու քո պահարանում մի գիրք ես միայն,
դու մի գիրք ես փակված,
կամ մի բույս անանուն,
որի արմատները խրված են հողի մեջ:
(«Քո պահարանում»[16])

Բանաստեղծական «ես»-ում մենք նկատում ենք բանաստեղծական սուբյեկտի ներաշխարհի առանձնահատկությունների այնպիսի դրսևորումներ, որոնք թույլ են տալիս տարբերակել «ես»-ը ըստ «ես» հոգեբանականի և «ես» կենսագրականի:

...Դրախտի ճանապարհին մի ստվեր կարծես
սպասում էի նրան: Այն, ինչ խոստացել ես,
Դու կտա՞ս ինձ, Աստված, կամ գուցե ես Քեզ
լավ չե՞մ ըմբռնել, և քո ժեստը մի օր
ես կարծել եմ ինձ համար նետված մի ակնարկ:
(«Երբ նա գնաց»[17])

«Հայ հանճարը կարողացել է խոսել մարդկային սրտի ամենանվիրական ու ամենաքնքույշ զգացմունքների հետ և կարողացել է հասնել մինչև Նարեկացին, որ ապաշխարողի կերպարանքով, իր գլուխը բարձրացրել է մինչև երկինք ու զրույց է արել Աստծո հետ երես առ երես»[18]: Բանաստեղծի՝ Աստծուն դառնալու հուզական-իմաստային երանգավորումը սկզբունքային է. ինքն իրեն մշտապես ունկնդրելը հատուկ է Էդոյանին:

Բանաստեղծը երբեմն գիտակցաբար ներկայանում է երկրորդ դեմքով՝ դառնալով «դու»: ««Դու»-ի հետ հանդիպման այս երևույթը հենց այն

[15] Նույն տեղում, էջ 78:
[16] **Էդոյան Հ.,** Ընտրանի, Եր., «Հայագիտակ», հրատ., 2016, էջ 28:
[17] Նույն տեղում, էջ 466:
[18] **Թումանյան Հ.,** Երկերի ժողովածու. 4 հատորով, 4-րդ հատոր, Եր., «Հայաստան» հրատ., 1969, էջ 241:

վայրն է, որտեղ առաջին անգամ հայտնվում է բուն «ես»-ը»[19]: «Բանաստեղծությունը գրելուց և ավարտելուց հետո նա կարող է պարզապես վերլուծել իր սեփական ստեղծագործությունը՝ ինքն իր համար դառնալով երկրորդ դեմք»[20].

Դու այնտեղ սպանեցիր
քո օրերի կեսը,
բայց երբ գլխի ընկար,
արդեն շատ ուշ էր:
(«Ապրիր, ելք չունես»[21])

Լիդիյա Գինզբուրգն իր «Լիրիկայի մասին» աշխատությունում շեշտում է, որ «լիրիկական հերոսը» ունի անձի բնութագրական հատկանիշներ և ընթերցողը հեշտությամբ կարող է պատկերացնել կամ երևակայել նրան: Ըստ Լ. Գինզբուրգի՝ «Իրական լիրիկայում բանաստեղծի անձը միշտ ներկա է, բայց լիրիկական հերոսի մասին իմաստ ունի խոսել այն ժամանակ, երբ այն ունի կենսագրական, սյուժետային կայուն գծեր»[22]: «Հանդիպում Հերակլիտի հետ, սեպտեմբեր ամսին» բանաստեղծությունում մշտապես զգացվում է էդոյանական յուրօրինակ ինտոնացիան, որի մեջ բանաստեղծը բացահայտում է իրեն. դա կարող է ուղերձ լինել տիեզերքին, սեփական իդեալին, դիցաբանական հերոսին՝ ամեն անգամ բացահայտելով իր նոր սահմանը.

Ես Հերակլիտն եմ, անաչք, ինչպես հունական քանդակ,
ես ավելի բարձր եմ Պատգամախոսից, ես մոտ եմ
երկնքին, որովհետև տեսնում եմ Կյանքը և Մահը,
ես գիտեմ, որ ամեն ինչ անկրկնելի է, եզակի, ավարտված...
(«Հանդիպում Հերակլիտի հետ, սեպտեմբեր
ամսին»[23])

Ամեն ինչ բանաստեղծի համար դառնում է անձնական. «Ես Հերակլիտն եմ», «ես ավելի բարձր եմ Պատգամախոսից»:

Շատ դեպքերում «դերանվան հետևում կանգնած է ոչ միայն քերականական, այլև բանաստեղծական անձի կատեգորիան»[24], իսկ

---

[19] **Франк С. Л.** Сочинения, М., изд. «Правда», 1990, с. 355.

[20] **Էդոյան Հ.,** Շարժում դեպի հավասարակշռություն, Եր., «Ս. Խաչենց» հրատ., 2009, էջ 362:

[21] **Էդոյան Հ.,** Ընտրանի, Եր., «Հայագիտակ», հրատ., 2016, էջ 320:

[22] **Гинзбург Л. Я**. О лирике, М., изд. «Интрада», 1997, с. 155.

[23] Նույն տեղում, էջ 178:

[24] **Лотман Ю. М.** О поэтах и поэзии: анализ поэтического текста, СПБ., изд. «Искусство–СПБ», 1996, с. 554.

բանաստեղծական ստեղծագործության հիմքը բանաստեղծի անձնական կյանքն է, նրա անմիջական անձնական փորձը՝ միջնորդավորված բանաստեղծական սուբյեկտի կամ էլ միֆի միջոցով: Բանաստեղծական «ես»-ից ծնված բանաստեղծական սուբյեկտը հաճախ հորինված անձ է: Նա բանաստեղծի դերը ստանձնած այն «ես»-ն է, որը հաճախ զարմանալիորեն նույնանում է նրա իրական «ես»-ի հետ, երբեմն՝ առանց ընդհանրություն ունենալու.

Ես ոչ թե ցանկություն եմ արտահայտում, այլ վիճակ,
այն, ինչ ապրում է քարի և աղյուսի մեջ և օվկիանոսի ափին,
ես մեծ քարեր եմ կախում բառերի ոտքերից, որպեսզի չթռչեն...
...բայց ես գնում եմ ձայնի ետևից և ոչ թե արձագանքի...
(«Նախկին պատկերների էլեգիան»[25])

Հ. Էդոյանը գիտակցում է իր տաղանդի եզակիությունը և այն, որ այդ տաղանդը բխում է Աստծուց: Նա ամեն ինչ *տեսնում է վերերկրային դիտանկյունից,* ինքն իրեն փնտրում բոլոր երևույթների մեջ և համոզված է, որ.

«....ես հավերժական եմ, քանի որ եզակի եմ և անկրկնելի...»[26]

«Ես»-ի և «դու»-ի հավերժական երկխոսությամբ բանաստեղծի կողմից ինքն իրեն բացահայտելու գործընթացը չի ավարտվում բացառապես սեփական տեսլականով. դրա համար անհրաժեշտ է զգացմունք: Հենց զգացմունքն է դառնում բանաստեղծի կողմից աշխարհի ճանաչողության «հենման կետը», նրա հայելին.

Քառսը մենք ենք, ես ու դու,
մեր հանդիպումը փողոցում, այգում,
շքամուտքի առջև,
մեր խաչաձևվող բախտն ու ձեռքերը,
և ուժգին աղմուկը մի գետի,
ստորերկրյա ինչ-որ աշխարհից:
(«Քառսը մենք ենք, ես ու դու»[27])

Վերոնշյալ բանաստեղծությունում դերանվանական բազմազանությամբ արտահայտված է զգացմունք, վիճակ, զգացողություն:

Հեղինակային «ես»-ը, չունենալով անուն կամ որոշակի արտաքին բնութագրիչներ, իր ինքնատիպությամբ, կարելի է ասել, նույնանում է

[25] Նույն տեղում, էջ 163:
[26] **Էդոյան Հ.,** Ընտրանի, Եր., «Հայագիտակ», հրատ., 2016, էջ 163:
[27] Նույն տեղում, էջ 182:

բանաստեղծի հետ: Նա օտարված է և միայնակ, նա դարաշրջանների փոփոխությանը նախորդած վերափոխումների և շրջադարձերի ականատեսն է: Հեղինակային «ես»-ը բացահայտորեն արտահայտում է նման փոփոխությունների հանդեպ իր ունեցած դիրքորոշումը, բայց միևնույն ժամանակ ստանձնում է հետազոտողի առաքելությունը: «Մեծն պոետը, խոսելով իր մասին, իր «ես»-ի մասին, խոսում է ընդհանուրի՝ մարդկության մասին, որովհետև նրա խառնվածքի մեջ կա այն ամենը, որով ապրում է մարդկությունը: Եվ դրա համար էլ նրա տխրության մեջ ամեն ոք ճանաչում է իր տխրությունը, նրա հոգու մեջ ամեն ոք ճանաչում է իր հոգին և նրա մեջ տեսնում է ոչ միայն պոետի, այլև մարդու, մարդկության իր եղբորը: Ընդունելով նրան որպես իրենից անհամեմատ բարձր էակ՝ ամեն ոք միաժամանակ գիտակցում է իր ազգակցությունը նրա հետ»[28]:

Պոետիկ տեքստի կառուցվածքում հեղինակային «ես»-ի նշանակությունը կարևորել է դեռևս Հեգելը, ով շեշտել է, որ բանաստեղծական տեքստի բովանդակությունն են «կազմում սուբյեկտիվությունը, ներքին աշխարհը, խորաթափանց, զգայուն հոգին, որը գործողությունների դիմելու փոխարեն, առավելապես կանգ է առնում ինքն իր վրա, որպես ներքին տարերքի, ուստի որպես սուբյեկտ այն արտահայտվում է՝ հանդիսանալով լիրիկայի միակ ձևն ու վերջնական նպատակը»[29]:

Այսպիսով, Հ. Էդոյանի գործածած հեղինակային «ես»-ին բնորոշ դերանվանական ձևերը թույլ են տալիս բացահայտել «ես»-ը՝ «ես» հոգեբանականը և «ես» կենսագրականը, որոնց միջոցով կառուցվում են բանաստեղծի հարաբերությունները աշխարհի և մարդկանց հետ, ցույց են տալիս բանաստեղծական «ես»-ի ներդաշնակությունը տիեզերքի և աշխարհի հետ:

---

[28] **Բելինսկի Վ. Գ., Չերնիշևսկի Ն. Գ., Դոբրոլյուբով Ն. Ա.,** Ընտիր էջեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1980, էջ 64:

[29] **Гегел Г. В. Ф.** Эстетика. В четырех томах, том четвертый, М., изд. «Искусство», 1971, с. 225.

Հ. Զաքարյան

Հեղինակային «Ես»-ին բնորոշ դերանվանական ձևերը Հենրիկ Էդոյանի պոեզիայում

Ամփոփում

Հոդվածում դիտարկվում են Հենրիկ Էդոյանի հեղինակային «ես»-ին բնորոշ դերանվանական ձևերը: Առանձնացվում են դերանվանական ձևի որոշ տիպեր, որոնք թույլ են տալիս տարբերակել «ես»-ը, «ես» հոգեբանականը և «ես» կենսագրականը: Էդոյանի ստեղծագործություններում առկա դերանվանական ձևերով արտահայտված հեղինակային «ես»-ի ուսումնասիրությունը թույլ է տալիս պատկերացում կազմել պոետի հայացքների, աշխարհընկալման մասին և բացահայտել նրա բանաստեղծական աշխարհի օրենքները:

Р. Закарян

Местоименные формы характерные для авторского “Я” в поэзии Генриха Эдояна

Резюме

В статье рассматриваются местоименные формы характерные для авторского «Я» Генриха Эдояна, выделяются некоторые типы местоименной формы, которые позволяют различать «Я»: психологическое «Я» и биографическое «Я». Изучение авторского «Я», которая в произведениях Эдояна выражена в форме местоимений, позволяет составить представление о взглядах, мировоззрении поэта и раскрыть законы ее поэтического мира.

H. Zakaryan

The pronominal forms related to the authorial in “I” Henrik Edoyan’s

Summary

The article touches upon the pronominal forms of the authorial “I” Henrik Edoyan’s. There are some types of pronominal forms that show the difference between "I", psychological “I” and biographical "I".The study of the author's "I" present in Edoyan’s works, expressed in pronominal forms allows an insight into the poet's views, worldview and reveals the laws of his poetic world.

Խմբագրություն է ուղարկվել 10.03.19
Հանձնարարվել է գրախոսության 25.03.19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19